ՀՈՒՇԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության տարածքում փոքր և միջին բիզնեսի տնտեսական մրցակցության բնագավառում իրավական պաշտպանություն» ծրագրի իրականացման մասին

ԿՈՂՄԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Ք. Երևան, Միեր Մկրտչյան 5բ
Հեռ. (+374-10) 543-985, Ֆաքս (+374-10) 543-986
www.competition.am, info@competition.am

2. ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն

Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական գրադարան
Հեռ. (+374-10) 576-326, (+374-10) 550-810
www.celi.am, info@celi.am

3. «BRAVE» իրավաբանական ընկերություն

Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1,
Էրեբունի Պլազա Բիզնես Կենտրոն, 403 սենյակ
Հեռ. (+374-10) 525578, (+374-10) 525579
www.brave.am, info@brave.am

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ Հայաստանի Հանրապետությունում շուկայական տնտեսության կայացման և զարգացման համար տնտեսական մրցակցության կենսական նշանակությունն ու կարևորությունը,

ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության իշխանությունների և միջազգային կազմակերպությունների վճռականությունը՝ երաշխավորելու շուկայական տնտեսության բնականոն գործունեությունը և դրա շրջանակներում տնտեսվարող սուբյեկտների համար ապահովելու տնտեսական մրցակցության պաշտպանության իրական գործիքներ և մեխանիզմներ,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ փոքր ու միջին բիզնեսի իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, այս ոլորտում մասնագիտացած և միջազգային լավագույն փորձին տիրապետող գիտահետազոտական հաստատությունների ու փորձագետների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների միջև սերտ համագործակցություն և համալիր միջոցառումների իրականացում,

ՀԱՄՏԱՏԵԼՈՎ սույն Հուշագրի մասնակիցների համաձայնությունը միասնական ուժերով հասնելու եվրոպական արժեքների վրա հիմնված և արդյունավետ գործող շուկայական տնտեսության, որտեղ կերաշխավորվի և կխրախուսվի տնտեսվարող սուբյեկտների միջև ազատ տնտեսական մրցակցությունը, ձեռնարկատիրության զարգացումն ու փոխադարձ վստահությունն ու հարգանքը,

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը

ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը

«BRAVE» իրավաբանական ընկերությունը

ՈՐՈՇԵՑԻՆ համատեղել իրենց ջանքերը, ներուժը և հնարավորությունները «***Հայաստանի Հանրապետության տարածքում փոքր և միջին բիզնեսի տնտեսական մրցակցության բնագավառում իրավական պաշտպանություն***» ծրագիրն իրականացնելու համար:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն Հուշագրի նպատակներն են.

- բարձրացնել Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը.
- ապահովել փոքր և միջին բիզնեսի տնտեսական մրցակցության պաշտպանության համար առավել բարենպաստ միջավայր.
- եվրոպական լավագույն փորձի հիման վրա բարձրացնել Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից փոքր և միջին բիզնեսի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում տրամադրվող ծառայությունների որակն ու արդյունավետությունը:

Սույն Հուշագրում տեղ գտած միջացառումների իրականացման ամբողջ ընթացքում կողմերը կփոխանակվեն անհրաժեշտ տեղեկատվությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, որը պետք է օգտագործվի միայն սույն Հուշագրում նշված գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Սույն Հուշագրի իրականացման նպատակով.

1. ***Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը*** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իր իրավասությունների սահմաններում սույն Հուշագրի կողմերի հետ համատեղ, մշակում և իրականացնում է փոքր և միջին բիզնեսի՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պետական քաղաքականություն, համակարգում է սույն Հուշագրի մասնակիցների կողմից իրականացվող համատեղ գործողությունները և ապահովում դրանց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու այս ոլորտում իրականացվող Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությանը:
2. ***ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը*** իր կանոնադրության շրջանակներում սույն Հուշագրի կողմերին ապահովում է անհրաժեշտ խորհրդատվությամբ և հետազոտական, տեղեկատվական և գիտական նյութերով, որոնք հիմնված են Եվրոպական հանձնաժողովի և Եվրպական ընկերակցությունների դատարանի կողմից ընդունված որոշումների և վճիռների, նրանց կողմից իրականացվող հակամենաշնորհային (տնտեսական մրցակցության պաշտպանության) քաղաքականության հետազոտման վրա: Սույն Հուշագրի կողմերի առաջարկությամբ իրականացվնում են կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր՝ Եվրոպական Միության օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի հիման վրա:
3. ***«BRAVE» իրավաբանական ընկերությունը*** Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տնտեսական մրցակցության օրենսդրության խախտման արդյունքում տուժած փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին ապահովում է անվճար իրավաբանական խորհրդատվությամբ, իրականացնում նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության դատական և այլ մարմիններում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սույն Հուշագիրը կողմերի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Սույն Հուշագրի մեջ ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է բոլոր կողմերի համաձայնությամբ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Սույն Հուշագիրն արտացոլում է կողմերի ցանկություններն ու մտադրությունները և նրանց համար չի առաջացնում որևէ իրավական պարտավորություն:

Հուշագրին կարող են միանալ տնտեսական մրցակցային իրավունքների պաշտպանության ոլորտում ներգրավված տեղական և միջազգային կազմակերպությունները:

Սույն հուշագրի մասնակիցների ցանկի փոփոխությունը իրականացվում է կողմերի համաձայնությամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում բոլոր կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Սույն Հուշագրի արդյունավետ իրականացման համար պատասխանատու են.

1. *Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի* կողմից Հանձնաժողովի նախագահը.

2. *ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի* կողմից Կենտրոնի տնօրենը.

3. *«BRAVE» իրավաբանական ընկերության* կողմից Ընկերության գործընկեր-տնօրենը:

ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Հուշագրի ցանկացած մասնակից ցանկացած ժամանակ կարող է գրավոր իրազեկել մյուս մասնակիցներին Հուշագրում իր մասնակցության դադարեցման մասին: Նման դեպքերում նրա մասնակցությունը Հուշագրին դադարեցվում է իրազեկման պահից սկսած մեկ ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՈՒ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

Սույն հուշագրում նախանշված ծրագրերի իրականացման ու խնդիրների լուծման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել Հուշագրի շրջանակներում կատարվող միջոցառումների հանրային իրազեկում:

Իրականացնող՝ «Արմնյուզ» հեռուստաընկերություն:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ստորագրված է
քաղաք Երևանում 2009 թվականի հոկտեմբերի 16-ին

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական
հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Շահնազարյանի կողմից .....

ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի կողմից ստորագրված է
քաղաք Երևանում 2009 թվականի հոկտեմբերի 16-ին

ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման
կենտրոնի տնօրեն պարոն Ա. Ղազինյանի կողմից .....

«BRAVE» իրավաբանական ընկերության կողմից հաստատված և ստորագրված է
քաղաք Երևանում 2009 թվականի հոկտեմբերի 16-ին

«BRAVE» իրավաբանական ընկերության
գործընկեր-տնօրեն պարոն Կ. Գևորգյանի կողմից .....